Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.Անունը, ազգանունը.

ՀՀ պատվիրակություն

1. Հովհաննես Հարությունյան - պատվիրակության ղեկավար,
2. Արմեն Հարությունյան
3. Գաբրիել Թեփելիկյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

1. Առողջապահության նախարարի տեղակալ
2. Արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալ
3. Առողջապահության նախարարության արտակարգ իրավիճակների և զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Վրաստան, ք. Գորի և ք.Թբիլիսի

4. Հրավիրող կողմը.

Գործուղումն իրականացվել է 07.07.2019 թ. Վրաստանի Գորի քաղաքի մոտ տեղի ունեցած ավտովթարի հետևանքով տուժած ՀՀ քաղաքացիներին օգնություն ցուցաբերելու նպատակով

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

2019 թվականի հուլիս 7-ին Վրաստանի Հանրապետության Գորի քաղաքի մոտ տեղի ունեցած ողբերգական վթարի հետևանքով տուժած ՀՀ քաղաքացիներին օգնության ցուցաբերում

6. Քննարկված թեմաները.

Ս.թ. հուլիսի 7-ին խումբը մեկնել և ժամանել է Վրաստանի Հանրապետության Գորի քաղաք՝ տեղական ժամանակով ժամը 14:30-ին:

Ժամանելուն պես հանձնաժողովի անդամները ՀՀ դեսպանության աշխատակիցների հետ այցելել են քաղաքի տարբեր հիվանդանոցներում բուժում ստացող տուժած քաղաքացիներին: Գորիի քաղաքային հիվանդանոցում բուժում էին ստանում վթարից տուժած 2 ՀՀ քաղաքացիներ, որոնց վիճակները գնահատվել են բավարար): Որոշում ընդունվեց այդ տուժած քաղաքացիներին հաջորդ օրն առավոտյան սանիտարական ավտոտրանսպորտով տեղափոխել հետագա բուժման Հայաստանի Հանրապետության համապատասխան բժշկական կազմակերպություններ:

Գորիի քաղաքային դիահերձարանում գտնվում էին 3 ՀՀ քաղաքացիների դիերը, պայմանավորվածություն ձեռք բերվեց արագորեն կազմակերպել դիակների դատաբժշկական փորձաքննությունն ու դրանից հետո մահացած քաղաքացիների դիերը համապատասխան տրանսպորտով տեղափոխել հայրենիք:

Ժամը 17:00-ին աշխատանքային խմբի անդամներն այցելեցին Թբիլիսիի վնասվածքաբանության և Իաշվիլիի մանկական հիվանդանոցներ՝ որտեղ բուժում էին ստանում ՀՀ 3 քաղաքացի: Վերջիններիս վիճակը գնահատվում էին ծանր և ծայրահեղ ծանր:

Աշխատանքային խմբի անդամներն անհատապես այցելել են բոլոր ծանր վիճակում գտնվող տուժածներին:

Հուլիսի 8-ին Գորիի և Թբիլիսի հիվանդանոցներում բուժվող միջին ծանրության և բավարար վիճակում գտնվող 3 տուժած ՀՀ քաղաքացիները սանիտարական ավտոտրանսպորտով տեղափոխվել են Երևանի Սուրբ Աստվածամայր ԲԿ և Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ:

Նույն օրը ժամը 14:30-ին Հայաստանի Հանրապետությունից ուղղաթիռով Թբիլիսի է ժամանել վերակենդանացման բժշկական բրիգադը:

Նույն օրը երեկոյան խմբի ղեկավարի կողմից որոշում է ընդունվել Հայաստանի Հանրապետություն վերադարձնել խմբի անդամ Գ.Թեփելիկյանին և ԱՆ

ավտոմեքենան: Խմբի նշված անդամները նույն օրը ժամը 22:30-ին մեկնեցին Թբիլիսիից և հուլիսի 9-ին ժամը 03:00-ին ժամանել են Երևան:

Հուլիսի 9-ին կազմակերպվել է քաղաքացի Արթուր Միրիջանյանի (ծնվ.1978թ.) տեղափոխումը ուղղաթիռով Թբիլիսիից Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ-ի վերակենդանացման բաժանմունք: Խմբի հետ վերադարձել է նաև խմբի ղեկավարը:

Հուլիսի 10-ին Սուրբ Աստվածամայր ԲԿ-ի վերակենդանացման բրիգադի ուժերով ՀՀ համանուն բժշկական կենտրոն է տեղափոխվել քաղաքացի Միհրան Միրիջանյանը (ծնվ.2005թ.):

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Կայացել են հանդիպումներ բժշկական կազմակերպությունների ղեկավարության ու բուժող բժիշկների հետ, ճշգրտվել են յուրաքանչյուր տուժածի առողջական վիճակն ու հետագա նախատեսվող միջոցառումները:

Աշխատանքային խմբի անդամները սերտորեն համագործակցել են Վրաստանի Հանրապետությունում ՀՀ դեսպանատան աշխատակիցների հետ, նրանց կողմից ցուցաբերվել է համապատասխան օգնություն և աջակցություն:

Հանդիպումներ են եղել բժշկական կազմակերպություններում բուժում ստացող ՀՀ քաղաքացիների հարազատների հետ, յուրաքանչյուրին հնարավորինս մանրամասն ներկայացվել են տուժածների առողջական վիճակի վերաբերյալ ճշտված տվյալները, պարզվել են նրանց կարիքներն ու տրվել են պարզաբանումներ հետաքրքրող հարցերի վերաբերյալ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Բժիշկների հետ համատեղ կազմակերպվել են ծայրահեղ ծանր վիճակում գտնվող 2 տուժած ՀՀ քաղաքացիների առողջական վիճակի և տեղափոխման հնարավորությունների քննարկման շուրջ կոնսիլիում: Կոնսիլիումի արդյունքում որոշվել է, որ տուժած անչափահաս քաղաքացուն առայժմ հնարավոր չէ տեղափոխել, իսկ մեքենայի վարորդը հաջորդ օրը կարող է տեղափոխվել ՀՀ ուղղաթիռով:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

06.09.2019 թ.